



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

19.09.2015 թ. N

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի կապակցությամբ:

Միրելի հայրենակիցներ,

Անկախությունը մեր ազգի դարավոր բաղձանքն է, որն արդեն իսկ 24 տարվա պատմություն ունեցող անգնահատելի ձեռքբերում է:

Վստահ եմ, որ յուրաքանչյուրս քաջ գիտակցում ենք այս տոնի արժեքն ու կարևորությունը և այդ վեհ տրամաբանությամբ էլ պետք է կարողանանք ամուր, անխախտ ու հաստատուն պահել հայրենի պետականությունը ու մեր սահմանների անսասանությունը:

Սեպտեմբերի 21-ի կապակցությամբ հնչող շնորհավորանքների հետ մեկտեղ հաջողություններ պետք է մաղթենք մեր հայրենիքի շարունակական զարգացման և առավել հզորացման բոլոր գործընթացներին ու ցանկանանք, որ այսուհետ ևս իրականություն դառնան համայն հայության բոլոր երազանքները:

Հայաստանի ' Հանրապետության նորոյա պատմության ամենակարևոր իրադարձության՝ Անկախության տոնի առիթով կրկին շնորհավորում եմ և ցանկանում ամենայն բարիք:

Հարգանքներով

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ